ArmLur.am

I SSN 1829-2763

23046

9 771829 276006

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 մարտի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

46
(2712)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 170



Հայաստանի տարբեր ղեկավարների օրոք սպառազինության ձեռք բերման հարցը շարունակում է շահարկման թեմա հանդիսանալ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 14-ին՝լրագրողների հետ հանդիպման ժամանակ, հայտարարեց. «Հայաստանի Հանրապետությունը 2018թ.-ից 2020 թվականը ձեռք է բերել ավելի շատ զինամթերք, քան նախորդ տասը տարին՝բոլորը իրար հետ վերցրած: Սա ապացուցված վիճակագրություն է, հասկանո՞ւմ եք»: Եվ ուշագրավ է, որ Նիկոլ Փաշինյանը նման եզրակացության է եկել՝ Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) հրապարակած տվյալներից ելնելով, եւ այդ վիճակագրությունը այդ տվյալների հիման վրա էր: Նկատենք՝ոչ մեկ անգամ գրվել է այն մասին, որ SIPRI-ի տվյալները մեծամասամբ հավաքագրվում են բաց աղբյուրներում հասանելի տեղեկություններից, դրանք թերի են, դրանցում արտացոլված չեն սպառազինությունների ձեռք բերման այն գործարքները, որոնց մասին տեղեկություններ չեն արտահոսել, ինչպես նաեւ ոչ խոշոր զինատեսակների ու սպառազինության մատակարարումները: Միեւնույն ժամանակ, այդ ինստիտուտի տվյալներում ներկայացված են ոչ թե սպառազինության գները, այլ SIPRI-ի մշակած հատուկ միավորը: Այս ամենից ելնելով՝ «Սիվիլնեթ»-ի «Փաստերի ստուգման հարթակ»-ը գրավոր հարցում էր ուղարկել վարչապետի աշխատակազմ եւ հետաքրքրվել, թե Փաշինյանի հնչեցրած՝ զինամթերքի գնման «ավելի շատ» լինելը չափվել է արդյոք քանակական, թե արժեքի (դրամային) տրամաբանությամբ: Այս հարցին աշխատակազմը, սակայն, չի պատասխանել: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ Նիկոլ Փաշինյանի այն պնդումը, թե իրենց իշխանության երկու տարիներին՝ 2018-2020թթ.-ին, ձեռք է բերվել ավելի շատ զինամթերք, քան նախորդ տասը տարիներին՝միասին վերցված, մոլորեցնող է:



ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը, կարծես թե, խմբակցության ներսում արտոնյալ դիրքեր ունի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նա այն քիչ պատգամավորներից է, որ հաճախ չի մասնակցում խմբակցության նիստերին, քննարկումներին, ԱԺ նիստերին էլ ակտիվ չէ, բայց ոչ ոք, անգամ՝ՔՊ խմբակցության ղեկավարությունը, չի համարձակվում նրան նկատողություն անել: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս գրել է, որ ՔՊ-ում պատգամավորների բացակայության հարցը խիստ է դրված. այն պատգամավորները, որոնք բացակայում են ԱԺ-ի կամ ֆրակցիայի նիստերից, նկատողություն են ստանում: Հայկ Սարգսյանի դեպքում սա չի գործում. խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանն ու քարտուղար Արթուր Հովհաննիսյանը չեն համարձակվում նկատողություն անել նրան: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Սարգսյանին արտոնությունները տվել է հենց Փաշինյանը, նրա հովանու ներքո է, դրա համար էլ Հայկ Սարգսյանից փորձում են հեռու մնալ խմբակցության երիտղեկավարները: Հավելենք, որ Հայկ Սարգսյանը, բացի խմբակցության նիստերին ցուցաբերած պասիվությունից, կուսակցության ներքին հարցերին էլ չի խառնվում, թիմակիցների հետ էլ շփումները նվազագույնի է հասցրել: ՔՊ-ականներն էլ հետեւյալ քաղաքականությունն են որդեգրել. Հայկ Սարգսյանից «ինչքան հեռու, այնքան լավ»: Իհարկե, «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս առթիվ մեկնաբանություններ ստանալ պատգամավոր Հայկ Սարգսյանից, սակայն նրա հեռախոսահամարը տեւական ժամանակ է՝անջատված է, իսկ մեր նամակները նրա սոցիալական էջերին մնացին անպատասխան:




Amnesty International միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հրապարակել է «Աշխարհում մարդու իրավունքների վիճակը 2022-2023» զեկույցը, որտեղ ներկայացված են 156 երկրների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները: Անդրադարձ է կատարված նաեւ Հայաստանին, եւ քննադատության են ենթարկվել մի քանի ոլորտներ, առավելապես՝հավաքների ազատության ժամանակ տեղի ունեցած բռնությունների մասով: Մասնավորապես, զեկույցում անդրադարձ է առկա հունիսի 3-ին տեղի ունեցած դեպքերին, երբ ոստիկանությունը խլացուցիչ նռնակներ եւ ուժ կիրառեց հավաքի մասնակիցների նկատմամբ: Հիշեցնենք, որ այդ ժամանակ հիսուն անձինք՝ներառյալ 34 ոստիկաններ, բժշկական օգնության են դիմել, իսկ տասնյակ մարդիկ ձերբակալվել էին «զանգվածային բռնություններին» մասնակցելու համար: Զեկույցում նաեւ նշվում է, որ մինչեւ տարվա վերջ ոչ մի ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել կառավարության դեմ ուղղված ցույցերի հետ կապված չափից ավելի ուժ կիրառելու համար: Եվ չնայած այդ դեպքից անցել է 9 ամիս, սակայն «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ոչ մի ոստիկանի այդպես էլ մեղադրանք չի առաջադրվել: Նույնը նաեւ վերաբերում է սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած դեպքերին, երբ ոստիկանների կողմից բռնության ենթարկվեցին 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողները: ⇨ էջ 3



«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝Հակակոռուպցիոն կոմիտեն եւս կարճեց ԲԴԽ նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի աղմկահարույց ձայնագրության առիթով հարուցված քրեական վարույթը: «Ժողովուրդ» օրաթերթի այս տեղեկությունը հաստատեց նաեւ Հակակոռուպցիոն կոմիտեի լրատվական բաժինը: Իսկ հիմա գլխավորի մասին. ստացվում է, որ ԲԴԽ նախկին նախագահների ձայնագրության գործը, որտեղ խոսում էին, թե ինչպես են Ջհանգիրյանին ճնշում՝ստիպելով պատժել Վարդազարյանին, ՀՀ քննչական կոմիտեի եւ Գլխավոր դատախազության բախումների պատճառն է: Բանն այն է, որ ի սկզբանե այս աղմկահարույց ձայնագրության մասով նախաձեռնված քրեական վարույթը քննում էր ՀՀ քննչական կոմիտեն: 6 ամիս քննելով գործը՝Քննչական կոմիտեն տուժող չճանաչեց Ռուբեն Վարդազարյանին, քրեական վարույթով որեւէ մեկը մեղադրյալ չներգրավվեց, ու գործը կարճվեց: Այստեղից էլ սկսվեց «հակամարտությունը»: ՀՀ գլխավոր դատախազի «ԱԱԾ-ական» տեղակալ Արթուր Պողոսյանը վերաբացել էր գործի վարույթը կարճելու մասին ՔԿ քննիչի որոշումը: Եվ, ահա, Սասուն Խաչատրյանի ղեկավարած Հակակոռուպցիոն կոմիտեն գրեթե 3 ամիս քննեց կարճված գործը, սակայն հարցաքննության չհրավիրեց ո՛չ Վարդազարյանին, ո՛չ Ջհանգիրյանին. ոչ մի քննչական գործողություն, ըստ էության, չարեց ու որոշեց կարճել: Ըստ լուրերի՝ինտրիգը հիմքի մեջ է, որին կանդրադառնանք առաջիկայում: Այս պահին փաստենք, որ կոմիտեն ու դատախազությունը ներքին գզվռտոցի մեջ են, ու դատախազությունը փորձում է իր ուժը ցույց տալ, թե՝ձեր որոշումները վերջնական չեն, ու քրեական վարույթները մի մարմնից մյուս մարմին է ուղարկում կամ վերաբացել տալիս..., իսկ հասարակությունն էլ արդարության է հույսով սպասում:

ՃՆՇՈՒՄ ՉԿԱ

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐՈՇԻ ԱՐԺԵՔ ՉՈՒՆԵՆ

**«Ժողովուրդ» օրաթերթը Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ զրուցել է քաղաքագետ Հրանտ Մելիք-Շահնազարյանի հետ:**



**-Պարոն Շահնազարյան, Նիկոլ Փաշինյանը վերջերս կառավարության նիստին հայտարարեց, որ խաղաղության պայմանագիր լինելու է՝ բարձրագույն մակարդակներում ձեռք բերված գրավոր փաստաթղթերի հիման վրա: Չնայած հայկական կողմի միակողմանի խաղաղության ձգտումներին՝հակառակորդը ավելի է ագրեսիվացնում իր քաղաքականությունը, սպառնալիքներ է հնչեցնում, լարում է սահմանային իրավիճակը: Այս պայմաններում ինչպե՞ս եք պատկերացնում խաղաղության գործընթացը, ըստ Ձեզ՝ հնարավո՞ր է խաղաղության պայմանագիր նման լարված իրավիճակում:**

-Ես չեմ բացառում, որ Նիկոլ Փաշինյանը վաղն էլ հայտարարի՝ ինչ էլ լինի երկրում, եկեք համարենք, որ խաղաղություն է տիրում. նրա անպատասխանատու եւ հակասական, իրականությունը խեղող հայտարարությունները նորություն չեն, վաղուց նրա հայտարարություններին լուրջ չեն վերաբերվում թե՛ Հայաստանի ներսում, թե՛ միջազգային հանրությունը: Հետեւաբար նրա հայտարարությունները, թե խաղաղության պայմանագիր է լինելու, գրոշի արժեք ունեն, բոլորը լավ գիտեն՝ խաղաղության ասելով՝նա ինչ նկատի ունի: Նա, խաղաղության ասելով, նկատի ունի թշնամու նախապայմաններով դելիմիտացիա սահմաններին, Թուրքիայի հետ սահմանների բացում, չեմ բացառում նաեւ միջանցքի տրամադրում տարբեր ձեւակերպումներով այնպես, որ մարդիկ չհասկանան՝ ինչ տեղի ունեցավ: Ես նրա խոսքերի վրա հիմնվելու կամ դրանցից եզրակացության գալու որեւէ հիմք չունեմ, փոխարենը ես տեսնում եմ համագործակցված աշխատանք Հայաստանի ու Ադրբեջանի իշխանությունների միջեւ: Ադրբեջանցիները սահմանից են փորձում վախեցնել մեր ժողովրդին, նույնը ներսում անում է նաեւ Հայաստանի իշխանությունը, ասում է՝ պատերազմ կլինի, պետք է անպայման խաղաղության գնանք: Այս ընդհանուր տեղեկատվական-քարոզչական ահաբեկչություն իրականացնելով՝ առաջ են տանում թուրք-ադրբեջանական օրակարգը:

**-Պարոն Շահնազարյան, վերջին շրջանում կտրուկ ակտիվացել է ամերիկյան կողմը: ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը հայտարարեց, որ ԱՄՆ-ն ճնշումներ է գործադրում Ադրբեջանի վրա Լաչինի միջանցքը բացելու համար: Ամերիկյան կողմը մեկ այլ հայտարարություն եւս հնչեցրեց, որ նախապայմաններ է տեսնում Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության կնքման համար: Ինչո՞վ եք պայմանավորում ամերիկյան կողմի այս ակտիվությունը:**

-Բացառապես մեկ հանգամանքով՝ Հայաստանում հակառուսական տրամադրություններին նոր թափ հաղորդելու համար: ԱՄՆ-ն Ադրբեջանի վրա որեւէ ճնշում չի գործադրում, սա ակնհայտ է. մեծ հաշվով այս իրավիճակում ճնշման մեխանիզմներ չունեն էլ: Նրանք տեսնում են, որ Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության հետեւանքով Հայաստանում հակառուսական տրամադրություններն աճում են, փորձում են հիմա որպես դրական կողմ ներկայանալ, բայց նպատակը մեկն է՝ փորձում են Ռուսաստանին դուրս բերել տարածաշրջանից: ԱՄՆ-ն հայտարարություններից այն կողմ չի գնա, որեւէ պատժամիջոց, սահմանափակում կամ հստակ ձեւակերպված պահանջ, ճնշում Ադրբեջանի վրա չկա, փոխարենը զարգացնում են համագործակցությունն Ադրբեջանի հետ, հետեւաբար այդ հայտարարարությունները պոպուլիստական բնույթի են, զրոյական ազդեցություն ունեն:

**-Վերջերս Հայաստանի բարձրագույն դատարանը որոշեց, որ Հայաստանի միացումը միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը համապատասխանում է երկրի հիմնական օրենքին: Մոսկվան բավականին կոշտ է արձագանքել սրան եւ զգուշացրել «երկկողմ հարաբերությունների համար սրա չափազանց բացասական հետեւանքների մասին»: Ի՞նչ հետեւանքներ սա կունենա հայ-ռուսական հարաբերությունների վրա, Մոսկվան կտրուկ քայլերի կգնա՞:**

-Ռուսական կողմն այդպիսով առնվազն հնարավորություն է ստանում Հայաստանի հարցում անգործություն ցուցաբերելու համար, երբ, օրինակ, ի հայտ է գալիս նոր խնդիր, իրենք չեն միջամտում՝ ասելով՝ դուք մեր դեմ պայքարում եք, հիմա գնացեք ու ձեր խնդիրները լուծեք: Իսկ ՀՀ իշխանությունների նման քայլերի հետեւանքը Արցախի տարածքների կորուստն է, սահմանին տեղի ունեցող կրակոցներն են, Հայաստանի տարածքների օկուպացիան է, այս ամենը դրա հետ–անքն է: Հեղաշրջման առաջին իսկ օրից Նիկոլ Փաշինյանի կառավարության ոչ հաշվարկված ու հակառուսական քայլերի հետեւանքն է այս ամենը: Իհարկե, հասկանալի է, որ Ռուսաստանը նվեր չէ մեզ համար, շատ դժվար գործընկեր է, բայց պետք չէ առիթ տալ, որ ռուսական կողմն իր անգործությունն արդարացնի, պետք է ճիշտ հաշվարկված քայլեր անել ու Ռուսաստանի հետ հարաբերությունների ճիշտ մոտեցում ցուցաբերել, հակառակ դեպքում հետեւանքը տարածքային նոր կորուստներն են լինելու:

*Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ*

ՍՏՎԵՐԱՅԻՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄՆԵՐ՝ ԱՐՑԱԽՈՒՄ






Արցախում, չնայած դեկտեմբերի 12-ից սկսված շրջափակման հետեւանքով առաջացած լրջագույն մարտահրավերներին, նաեւ բնակիչներն են կանգնում սոցիալական խնդիրների առջեւ: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ որոշ ապրանքների մասով ստվերային մատակարարման աղմկահարույց բացահայտումներ են եղել: Բանն այն է, որ շրջափակված Արցախում տարբեր ապրանքների գները մեծ չափով աճել են, ինչը պայմանավորված էր ապրանքների մատակարարման դժվարություններով, ստվերային երեւույթներով ու գների վերահսկողության խնդիրներով: Դրանից հետո Արցախի կառավարությունը գների վերեւի շեմ էր հաստատել առանձին որոշմամբ՝ պարտավորեցնելով խանութներին հաստատված գներից բարձր գնով չվաճառել ստացված ապրանքները: Պարզվում է նաեւ, որ այս ընթացքում փակ հետաքննություններ ու գործողություններ են կատարվել պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի անմիջական համակարգմամբ, որոնց արդյունքում հնարավոր է եղել բացահայտել ու կանխել ստվերային մատակարարման խոշոր դեպքեր: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցեցին, որ մի քանի օր առաջ Ստեփանակերտում առգրավվել է մասնավոր տնտեսվարողի կողմից խաղաղապահների միջոցով ստվերային կերպով բերած երկու կամազ ապրանք՝տասնյակ միլիոն դրամ արժողությամբ, որոնց փոխարեն պետք է տեղափոխվեին կառավարության կողմից նախատեսված ապրանքներ: Դրանից հետո էլ կանխել են կրկին պետության նախատեսած ապրանքների փոխարեն Գորիսից երկու կամազ ապրանքի ստվերային տեղափոխությունը: Մեզ առայժմ չհաջողվեց պարզել, թե ում էին պատկանում առաջին բացահայտված ապրանքները, բայց, ըստ ստացած տեղեկությունների, երկրորդ դեպքը կապված է եղել Արցախում վատահամբավ Գագիկ Սարգսյանի (Սպեցնազի Գագո) անվան հետ, ում արդեն բեռնված ապրանքներն էլ նախքան Գորիսից դուրս գալը տեղում թափել է տվել պետական նախարարը՝պետության համար կարեւոր ապրանքներ տեղափոխելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Ասում են նաեւ, որ որոշ պաշտոնյաներ ընդգրկված են եղել այդ ստվերային գործընթացներում, որոնց մասով լրացուցիչ ստուգումներ են կատարվում:

ԶԵԿՈՒՅՑ

# ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

**Վարդան Արամյանի գլխավորած տնտեսագետների մասնագիտական խումբը ներկայացրել է զեկույց՝ շրջափակման հետեւանքով Արցախի տնտեսության կորուստների մասին:**

Զեկույցում նշվում է, թե ինչի հետեւանք են հանդիսանում Արցախի տնտեսության կորուստները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունից ներկրվող էլեկտրաէներգիայի օդային գիծը խափանվել է Ադրբեջանի կողմից, իսկ էլեկտրաէներգիայի ներքին արտադրությունը բավարարում է միայն ընդհանուր պահանջարկի մոտ կեսը, արտադրական հզորություններին հոսանք չի տրամադրվում: Այս պայմաններում կարողանում են շարունակել իրենց գործունեությունը միայն որոշ ծառայություններ (օրինակ՝ ֆինանսական կամ ՏՏ ոլորտի) մատուցող կամ բյուջետային հատվածի կազմակերպությունները: Այլ կազմակերպություններ գործունեություն հիմնականում չեն իրականացնում եւ հարկեր չեն վճարում:

Արցախի պետական բյուջեի ընդհանուր ուղղակի ծանրաբեռնվածությունը օրական կտրվածքով նվազագույնը մոտ 117.2 մլն դրամ է (296 հազ. ԱՄՆ դոլար) կամ ամբողջ բյուջետային ծախսերի 20 տոկոսը: Այս կապակցությամբ Արցախի կառավարությունը ստիպված է կրճատել բյուջետային, առաջին հերթին՝ տնտեսական բնույթի կապիտալ եւ ընթացիկ ծախսերը՝ ավելի խորացնելով անկումը Արցախի տնտեսության համար: Արցախի բյուջեի ծախսային կառուցվածքը հիմնականում սոցիալական բնույթ ունի, եւ դա պայմանավորված է նաեւ օբյեկտիվ պատճառներով, քանզի հետպատերազմյան շրջանում, շուրջ 30,000 անտուն մնացած արցախցիների խնդրի համատեքստում, ակնհայտ պետք է մեծանար բյուջետային ծախսերում սոցիալական բնույթի ծախսերի մասնաբաժինը: Վերջինս Արցախի տնտեսական տարածքների կորստի հետեւանքով բյուջետային եկամուտների էական նվազման եւ սոցիալական ծախսերի պահանջի մեծացման ֆոնին է՛լ ավելի է մեծացնում բյուջետային լարվածությունը:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԼԻՆԻ

Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտարարություն է տարածել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու վերաբերյալ:

«Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 134-րդ հոդվածի 8-րդ մասով՝ հայտարարում եմ.

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը որոշել է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի թափուր պաշտոնում առաջադրել Անահիտ Արտյոմի Մանասյանի թեկնածությունը:

Այսպիսով, ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները առաջադրել են Էդգար Ֆերդինանդի Ղազարյանի թեկնածությունը, իսկ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը՝ Անահիտ Արտյոմի Մանասյանի թեկնածությունը»:

Հանձնաժողովն առաջիկայում կգումարի արտահերթ նիստ, որտեղ կքննարկվի Ազգային ժողովին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեկնածու առաջարկելու մասին հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նիստը տեղի կունենա ապրիլի 3-ին եւ ապրիլի 7-ին՝ ժամը 11:00-ին:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները հաջորդ շաբաթ նիստեր կգումարեն:

Ապրիլի 3-ին՝ ժամը 11:00-ին, 414 դահլիճում նիստ կգումարի Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովը:

Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նիստը կկայանա ապրիլի 5-ին՝ ժամը 10:00-ին:

## ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ հաստատվել է ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրությունը:

Որոշման մեջ ասվում է. ««Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան եւ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝

Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության պետական պահպանության ծառայության կառուցվածքը՝ համաձայն N 2 հավելվածի (հույժ գաղտնի):

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ 2018 թվականի հոկտեմբերի 18-ի «Պետական պահպանության ծառայության կանոնադրությունը եւ կառուցվածքը հաստատելու մասին» N 1392-Լ որոշումը»:

ԽՆԴԻՐՆԵՐ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

**Amnesty International միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հրապարակել է «Աշխարհում մարդու իրավունքների վիճակը 2022-2023» զեկույցը, որտեղ ներկայացված են 156 երկրների վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները:**




Հայաստանի մասին լայնածավալ զեկույց է ներկայացված, որում անդրադարձ կա մարդու իրավունքների, խոսքի, հավաքների ազատության իրավունքների մասին:

Զեկույցում նշվում է, որ Հայաստանում իրավապահները չափից ավելի ուժ են կիրառել բողոքի ցույցերի մասնակիցների նկատմամբ, սահմանափակվել է արտահայտման ազատությունը. հարյուրավոր անձինք քրեական հետապնդման են ենթարկվել պաշտոնյաներին ենթադրաբար վիրավորելու համար:

Ըստ այդմ՝ Հայաստանում հավաքների ազատության վերաբերյալ զեկույցի հեղինակները գտնում են, որ հավաքների ազատությունը սահմանափակվել է բողոքի ցույցերի նկատմամբ իրավապահ մարմինների կողմից բռնի եւ անհամաչափ արձագանքի պատճառով: Խոսքը ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ցույցերի մասին են, որոնք պահանջում էին վարչապետ Փաշինյանի հրաժարականը: Ամենասուր բախումներից մեկը հունիսի երեքին էր, որի ժամանակ ոստիկանությունն արձակել է խլացուցիչ նռնակներ եւ կիրառել չափից ավելի ուժ: Զեկույցում նշվում է, որ հիսուն անձինք, ներառյալ 34 ոստիկաններ, բժշկական օգնության են դիմել, իսկ տասնյակ մարդիկ ձերբակալվել են «զանգվածային բռնություններին» մասնակցելու համար:

Ընդ որում՝ մինչեւ նախորդ տարվա վերջ ոչ մի ոստիկանի մեղադրանք չի առաջադրվել կառավարության դեմ ուղղված ցույցերի հետ կապված չափից ավելի ուժ կիրառելու համար: Արտահայտման ազատության հատվածում Amnesty International-ի զեկույցը գտնում է, որ այդ իրավունքը շարունակել է անհարկի սահմանափակված լինել: Քրեական հետապնդումները՝ կապված իշխանություններին ուղղված քննադատության օրինական արտահայտման հետ, բացասական ազդեցություն են ունեցել խոսքի ազատության վրա: Զեկույցի հեղինակները, ավելի ընդարձակելով վերոհիշյալ հիմնական կետերը, շարունակում են, որ հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով անվտանգային իրավիճակը մնացել է լարված՝ հաճախակի փոխհրաձգություններով: Ադրբեջանի հրետակոծությունները հարվածներ են հասցրել Հայաստանի բուն տարածքին՝ Սյունիքի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերին, ինչի հետեւանքով ավելի քան 200 մարդ է զոհվել, այդ թվում՝ երկու քաղաքացիական անձ:

Հոկտեմբերին Ադրբեջանը եւ Հայաստանը համաձայնության են եկել իրենց սահմանի երկայնքով Եվրամիության մշտադիտարկման առաքելության կարճաժամկետ տեղակայման շուրջ:

Ռուս-ուկրաինական պատերազմի հետեւանքով ռուսների լայնածավալ արտահոսքը Հայաստան օժանդակել է տնտեսական գործունեությանը, բայց այն նաեւ նպաստել է վարձակալության գների եւ, ընդհանուր առմամբ, ապրուստի արժեքի բարձրացմանը: Մարտ ամսին Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն մտահոգություն է հայտնել աշխատանքի անվտանգության եւ առողջության բարելավման նպատակով Հայաստանի կողմից ձեռնարկված անբավարար միջոցների, աշխատանքի անվտանգության եւ առողջության մասին հստակ սահմանված քաղաքականության բացակայության եւ բոլոր աշխատողների եւ նրանց խնամառուների համար սոցիալական ապահովության երաշխավորումը ձախողելու վերաբերյալ: Ոչ մի էական առաջընթաց չի արձանագրվել 2020 թվականի հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում եւ դրանից անմիջապես հետո կատարված պատերազմական հանցագործությունների ու միջազգային մարդասիրական իրավունքի այլ խախտումների հետաքննության կամ ենթադրյալ հանցագործներին պատասխանատվության ենթարկելու հարցում:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

ՆՈՐ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

**Չինական Zhongtong մակնիշի ավտոբուսների ձեռք բերման գործով, որի շուրջ նախաքննություն է ընթանում Հակակոռուպցիոն կոմիտեում, նոր մանրամասներ են ի հայտ գալիս:**

Չինական Zhongtong Bus ընկերությունից ավտոբուսներ ձեռք բերելու նպատակով Երեւանի քաղաքապետարանը մրցույթ էր անցկացրել դեռ 2021թ.: Արդեն նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի ընտրությունից հետո մրցույթը չեղարկվել էր: Հայտարարվել էր նոր մրցույթ, որը կրկին նույն հաղթողն էր ունեցել: Հատկանշական է, որ երկու պայմանագրերը ունեցել են գրեթե նույն բովանդակությունը եւ ավտոբուսների նույն տեխբնութագրերը: Ըստ իրավապահ համակարգի մեր աղբյուրների՝ մրցույթը չեղարկվել էր Հրաչյա Սարգսյանի անմիջական հրահանգով: Ավելին՝ Հրաչյա Սարգսյանը այդ ժամանակ Մետրոպոլիտենի տնօրենների խորհրդի նախագահ է նշանակում իր մտերիմ Հայկ Հովհաննիսյանին, որը կապի է դուրս գալիս չինական ընկերության հետ ու լծվում Երեւանի տրանսպորտային համակարգը համալրելու «հայրենանվեր» գործին: «Հայրենանվիրությունը» կատարյալ չէր լինի, եթե հանրությանը մատուցած իրենց ծառայությունների համար պաշտոնյաները կանխավ իրենց «պարգեւատրումը» չկազմակերպեին: Այդ «պարգեւատրումը» կազմակերպվել է արտարժույթի տատանումից օգտվելու միջոցով: 150 ավտոբուսներից յուրաքանչյուրի համար

| | | | | | | դրամ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Պայմանագրի համար | Կազմակերպության անվանում | Բանկ | Հ/Հ | Պայմանագրի գումար | Պայմանագրի վճարված գումար, ամսաթիվ ըստ վճարումների | | |
| 1 | ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6 | ZHONGTONG BUS HOLDING CO LTD | CHINA CONSTRUCTION BANK LIAOCHENG BRANCH | 37050185870400000655 | 7,199,920,000.00 | 1,799,975,497.00 | 07.05.2021 | կանխավճար |
| | | | | | | 5,399,944,498.70 | 10.11.2021 | |
| 2 | ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/10 | ZHONGTONG BUS HOLDING CO LTD | CHINA CONSTRUCTION BANK LIAOCHENG BRANCH | 37050185870400000655 | 2,236,000,000.00 | 558,987,000.00 | 14.06.2021 | կանխավճար |
| | | | | | | 1,677,012,995.20 | 26.11.2021 | |
| 3 | ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-22/234-1 | ZHONGTONG BUS HOLDING CO LTD | CHINA CONSTRUCTION BANK LIAOCHENG BRANCH | 37050185870400000655 | 6,637,424,900.00 | 1,991,227,469.60 | 07.09.2022 | կանխավճար |
| | *900012000957 | Քաղաքապետարանի հաշվեհամար 2021թ. | | | միավորի գինը | 44,720,000.00 | | |
| | *900012001351 | Քաղաքապետարանի հաշվեհամար 2022թ. | | | միավորի գինը | 44,249,499.36 | | |
| | | Քաղաքապետարան 2022թ. 15.6 կնքված, բայց ուժի մեջ չմտած | | | միավորի գինը | 43,663,535.00 | | |

վճարվել է 44.249.499 ՀՀ դրամ: Հասկանալի է, որ չինացիներին ոչ թե հայկական դրամ է վճարվել, այլ ԱՄՆ դոլար: 2021թ. յուրաքանչյուր ավտոբուսի գինը կազմել էր շուրջ 86 հազար ԱՄՆ դոլար՝ հաշվարկված 518 դրամ 1 դոլարի դիմաց կուրսով: 2022թ., երբ 1 դոլարի փոխարժեքը հավասար է եղել 405 դրամի, պայմանագրով նույն ավտոբուսի գինը կազմել է շուրջ 109 հազար ԱՄՆ դոլար: Չեղարկված մրցույթի հետեւանքով եւ նույն պայմաններով նոր մրցույթի անցկացման արդյունքում յուրաքանչյուր ավտոբուսի գինը ավելացել է ավելի քան 22 հազար ԱՄՆ դոլարով: Ընդհանուր առմամբ՝ 150 ավտոբուսները 2022թ. գնվել է մոտ 3.4 մլն ԱՄՆ դոլար ավել գումարով: Կարող է տպավորություն ստեղծվել, որ չինական ընկերությունը վերը նշված գումարի չափով թանկացրել էր իր ապրանքը, սակայն դա այդպես չէ: Պարզվում է՝ գնումը իրականացվել է Zhongtong Bus ընկերությունից, իսկ փոխանցումը կատարվել է վերջինիս դուստր՝ Beijing Strong Company ընկերությունից միջնորդ օֆշորային կազմակերպությանը, որը ստեղծվել է Արաբական Միացյալ Էմիրություններում հենց այդ նպատակով: Ըստ իրավապահ աղբյուրներից ստացված տեղեկության՝ առաջացած «միջնորդավճարը» կազմել է մոտ 30 տոկոս, որի մի մասը ստացվել է Դուբայում, իսկ տեղում գործերը «կարգի է բերել» վերը հիշատակված Հայկ Հովհաննիսյանը նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանի՝ Դուբայում ապրող եղբոր հետ միասին: Ներկայումս գործի նախաքննությունը Հակակոռուպցիոն կոմիտեում շարունակվում է, եւ չի բացառվում, որ առաջիկայում նոր կալանավորումների ականատես լինենք:

ԾԵԾԿՌՏՈՒՔ

# ՊԱՐԶՎԵԼ ԵՆ ԴԵՊՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

**ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում պարզվում են սույն թվականի մարտի 29-ի գիշերը Queen Music Hall ակումբում տեղի ունեցած ծեծկռտուքի հանգամանքները:**



29.03.2023թ.-ին՝ ժամը 04:12-ին, ՀՀ ոստիկանություն քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ հանդիսանում է պետական պաշտոնյա, իր նկատմամբ կատարվել է հարձակում, որի հետեւանքով ստացել է վնասվածք:

Դեպքի վայր հանդիսացող, Բաղրամյան փողոցում գործող Queen Musiծ Hall ակումբում կատարված առաջնային գործողությունների, օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տվյալներ են ստացվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 02:30-ի սահմաններում, Ոստիկանություն ահազանգած անձը երկու ընկերների հետ մտել է նշված ակումբ: Որոշ ժամանակ անց ակումբի անվտանգության աշխատակիցը մոտեցել է նրանց սեղանին եւ նկատողություն արել ակումբի աշխատակցի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորելու առթիվ: Այդ կապակցությամբ նրանց միջեւ ծավալված խոսակցությունը վերածվել է վիճաբանության, այնուհետեւ՝ ծեծկռտուքի, որին մասնակցել են ակումբի 2 այլ աշխատակիցներ եւս:

Ոստիկանություն ահազանգած անձը դեմքի շրջանում ստացել է մարմնական վնասվածքներ եւ տեղափոխվել հիվանդանոց:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել են դեպքի վայրի զննություն, ինչպես նաեւ անհետաձգելի այլ քննչական գործողություններ, միջադեպի բոլոր մասնակիցների ինքնությունները պարզվել են:

Անձի ստացած վնասվածքների առնչությամբ նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն:

Միջադեպին մասնակից 5 անձ ձերբակալվել է՝ առերեւույթ հանցանք կատարելու մեջ հիմնավոր կասկածի հիման վրա:

Նկատի ունենալով իրականացվելիք քննչական գործողությունների մեծածավալությունը՝ նախաքննության լրիվությունն ու բազմակողմանիությունն ապահովելու նպատակով ձեւավորվել է քննչական խումբ:

Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցները՝ կատարվածի հանգամանքները լիարժեք պարզելու, միջադեպին մասնակից բոլոր անձանց արարքներն անհատականացնելու եւ դրանց իրավական գնահատական տալու նպատակով:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

# ԲՆԱԿԻՉԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

**ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են Եղեգնաձոր քաղաքի 38-ամյա բնակչի կողմից երկու անձի ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքի մի շարք հանգամանքներ: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ 2023 թվականի փետրվարի 11-ին՝ ժամը 22.20-ի սահմաններում, Եղեգնաձոր քաղաքի հիշյալ բնակիչը նույն քաղաքի Միկոյան փողոցում գործող խանութ-սրահում հանդիպել է նույն մարզի Գետափ բնակավայրի 32-ամյա բնակչին, եւ նրանց միջեւ տեղի է ունեցել վիճաբանություն, որը տեւել է շուրջ 20 րոպե:**



Այնուհետեւ՝ ժամը 23:20-ի սահմաններում, 38-ամյա տղամարդը իր տանից՝ երկու ընկերների հետ նրանցից մեկին պատկանող «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով, իսկ 32-ամյա տղամարդը հիշյալ խանութի մոտից 3 ընկերների հետ «Նիսան» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներով գնացել են Երեւան-Մեղրի միջպետական ավտոճանապարհի 126-րդ կմ հատվածից դեպի աջ թեքվող դաշտամիջյան ճանապարհ, որտեղ 32 եւ 38-ամյա տղամարդկանց միջեւ վիճաբանությունը շարունակվել է: Այդ ընթացքում վերջինս նախապես իր հետ վերցրած խոհանոցային դանակով դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է 32-ամյա տղամարդու որովայնի ձախ հատվածին եւ վերջինիս ընկերներից մեկի ձախ ազդրի հատվածին՝ նրանց առողջությանը պատճառելով ծանր վնաս: Ապա նա փորձել է կրկին հարվածել 32-ամյա տղամարդուն, սակայն դանակը դիպել է վերջինիս մատին, որից հետո «Լեքսուս» մակնիշի ավտոմեքենայով դիմել է փախուստի: Ավելի ուշ վերջինս ներկայացել է վարույթն իրականացնող մարմնին: Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ միջնորդություն է ներկայացվել հսկողություն իրականացնող դատախազին՝ 38-ամյա տղամարդու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (2 դրվագ) հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է, եւ նրան ներկայացվել է մեղադրանք: Վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

## ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՓՈՒԼ

ՀՀ քննչական կոմիտեն «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի միջոցով իրականացնում է մասնագետների վերապատրաստման ծառայություններ: Այդ նպատակի համար հատկացվել է 1 մլն 229 հազար դրամ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ վերապատրաստումն իրականացվելու է երկու փուլով՝ մարտի 27-ից ապրիլի 21-ը եւ մայիսի 11-ից հունիսի 9-ը: Ուսուցման ընթացքում ուսումնասիրվելու են քրեական դատավարության մասին արդի հարցեր, քրեագիտական տակտիկայի մասին հարցեր եւ այլն:

*ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ՄԵՔԵՆԱՆ ԸՆԿԵԼ Է ՁՈՐԸ

Մարտի 29-ին՝ ժամը 00:12-ին, Տավուշի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Պառավաքար-Իջեւան ավտոճանապարհին ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ սահել ձորը. տուժածներ չկան: ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ քաղաքացիական պաշտպանության վարչության քաղաքացիական պաշտպանության ուժերի հավաքական կենտրոնի Տավուշի հատուկ օբյեկտների պահպանության հրշեջ-փրկարարական ջոկատի Պառավաքարի հենակետից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ Պառավաքար-Իջեւան ավտոճանապարհի 7-րդ կմ-ին Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենան (վարորդ Հ. Ա.՝ ծնված 1995 թ.) դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի հատվածից եւ մոտ 20 մետր սահել հարակից ձորը: Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենան, փակել գազի բալոնի փականը եւ այն դուրս բերել ճանապարհի երթեւեկելի հատված:

## ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ԶԵՆՔՈՎ

Մարտի 22-ի ուշ երեկոյան ոստիկանության Արաբկիրի բաժնում հաղորդում տվեց մի երիտասարդ. ժամը 20:30-ի սահմաններում Կոմիտասի պողոտայում ծանոթն ու նրա ընկերները զենք են պահել իր վրա եւ հափշտակել փաստաթղթերը, բջջային հեռախոսը, լիցքավորման մարտկոցն ու յոթ հազար դրամ: Ոստիկանությունից հայտնում են, որ Արաբկիրի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ՝ ավազակության հատկանիշներով: Բաժնի քրեական հետախույզներն անցան գործի, արագ պարզեցին ծանոթի ինքնությունը: Արդեն ժամը 21:50-ի սահմաններում 22-ամյա երիտասարդը հայտնաբերվեց Բյուրեղավանում՝ իր բնակության վայրի մոտ, ձերբակալվեց եւ տեղափոխվեց ոստիկանության Արաբկիրի բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեցին բջջային երկու հեռախոս, որոնցից մեկը տուժածից հափշտակածն էր, եւ կռփազենք: Քննչական բաժին ներկայացվելուց հետո նա տվեց խոստովանական ցուցմունք: Հետագա միջոցառումների արդյունքում քրեական հետախույզները պարզեցին նաեւ, թե ովքեր են եղել 22-ամյա երիտասարդի հետ: Արդեն առավոտյան նույն տարիքի, նույն քաղաքի եւ նույն փողոցի բնակիչ երկու երիտասարդ եւս ձերբակալվեցին ու տեղափոխվեցին ոստիկանության բաժին: Նրանցից մեկի խուզարկությամբ հայտնաբերվեց հանցագործության գործիք ատրճանակը: Նրանք նույնպես ներկայացվել են նախաքննական մարմին. հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 75 դեպք, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ԵՐԿՈՒՍՈՒԿԵՍ ՏԱՐԻ ԱՆՑ ՏՈՒԳԱՆՔ Է ԿԻՐԱՌԵԼ

Սահմանամերձ Ոսկեպարի բնակիչ, դպրոցի զինղեկ Նվեր Բեգլարյանը, Արցախում պատերազմի առաջին օրը՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին ծանուցագիր ստանալով, զորակոչվել է զինված ուժեր եւ նշանակվել ՄՕԲ-ի դասակի հրամանատար: Սեպտեմբերի 29-ին սահմանամերձ Ոսկեվան գյուղի բժշկական ամբուլատորիայի շենքի մոտ նա կայանել է իր մարդատար ավտոմեքենան, որպեսզի իր դասակի հետ այլ ավտոմեքենայով մեկնի սահմանագոտի: Այդ ավտոմեքենայում նստելուց հետո նրա անձնական ավտոմեքենան ինքնաընթաց հետ է շարժվել եւ աննշան վնասել այդտեղ կայանած՝ Կոթի գյուղի բնակչի ավտոմեքենային: Պատերազմական իրավիճակի պատճառով Նվերը մոռացել է այդ չնչին վթարի մասին՝ մտածելով, որ իր ավտոմեքենան ապահովագրված է «Ինգո Արմենիայի» կողմից, այդկերպ կլուծվի կոթեցու ավտոմեքենային պատճառված վնասի փոխհատուցման հարցը: «Ինգո Արմենիան» դեպքից երկուսուկես տարի անց գտել է Ն. Բեգլարյանի ավտոմեքենայի տիրոջը, ում անունով ավտոմեքենան գրանցված է: Ապահովագրական ընկերությունը այդ անձին 51 հազար դրամ տուգանելու որոշում է ուղարկել:

Ն. Բեգլարյանը 2023թ. մարտի 9-ին նամակով դիմել է «Ինգո Արմենիայի» ղեկավար Ա. Մելիքսեթյանին՝ հայտնելով վթարի հանգամանքները, նշելով, որ ինքը պատերազմի ժամանակ անհապաղ պետք է իր դասակը սահմանագոտի տաներ, ժամանակ չուներ աննշան վթարի խնդրով զբաղվելու, եւ խնդրել է չեղարկել տուգանելու որոշումը: Մարտի 14-ին «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ գույքային ապահովագրության հատուցումների վարչության պետի տեղակալ Ռուբեն Հովսեփյանը Ն. Բեգլարյանին հայտնել է, որ եւս մեկ անգամ ուսումնասիրելով հայտային գործը՝գտել են, որ բավարար հիմքեր չկան այն վերանայելու համար, եւ հավելել. «Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 29/09/2020թ. Տավուշի մարզի 6-րդ փողոցում տեղի ունեցած պատահարի ժամանակ, ըստ առկա տեղեկատվության, Ձեր կողմից պատահարի մասին ընկերությանը չի տեղեկացվել՝ համաձայն Հայաստանի ավտոապահովագրվողների բյուրոյի RL1-001 կանոններով սահմանված ժամկետի»: Առաջարկել է 5-օրյա ժամկետում ընկերության «Արարատբանկ» ԲԲԸ-ում առկա հաշվեհամարին վճարել 51.000 ՀՀ դրամ՝ «հետագա գործընթացներից զերծ մնալու համար»: Ի՞նչ է նշանակում «Տավուշի մարզի 6-րդ փողոց»: Տավուշում կա 62 բնակավայր, որոնց մեծամասնությունն ունի 6-րդ փողոց. վթարը տեղի է ունեցել Ոսկեվանում: Սա ցույց է տալիս, որ «Ինգո Արմենիա»-ում չեն էլ ուսումնասիրել Ն. Բեգլարյանի նամակում նշված փաստերը: Նա դիմել է ՄԻՊ-ի թեժ գիծ, ՄԻՊ-ի գրասենյակում տարբեր պատճաբանություններով հրաժարվել են գործով զբաղվել՝ խորհուրդ տալով դիմել ՀՀ փաստաբանական պալատ: Նա աջակցության համար դիմել է նաեւ ՊՆ Սուրեն Պապիկյանին, ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության մշտական հանձնաժողով:

*ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ՇԱՏ ԲԱՆ Է ԱՐՎԵԼ

# ՀԱՊԿ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՌԴ արտաքին գործերի փոխնախարար Գալուզինը RTV-ի հետ հարցազրույցի ժամանակ հույս է հայտնել, որ ՀԱՊԿ շրջանակներում Երեւանի հետ փոխգործակցության բոլոր հարցերը, այդ թվում՝ կազմակերպության դիտորդական առաքելության՝ Հայաստանի տարածքում տեղակայումը, կլուծվեն կառուցողական եւ փոխշահավետ ձեւով:**



«Մենք բաց քննարկում ենք հայկական կողմի բոլոր մտահոգությունները ՀԱՊԿ-ում առկա փոխգործակցության ձեւաչափերի շրջանակներում՝ սկսած մշտական խորհրդի նիստերից մինչեւ Հավաքական անվտանգության խորհուրդ, որը կազմակերպության բարձրագույն մարմինն է: Վերահաստատում ենք մեր պատրաստակամությունը՝ իրագործելու հայ-ադրբեջանական սահմանին ՀԱՊԿ առաքելության տեղակայման ծրագրերը՝ ի շահ Հայաստանի անվտանգության ապահովման, ինչպես նաեւ այլ օգնության միջոցները, որոնք ամրագրված են Հայաստանին օգնություն ցուցաբերելու մասին ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի որոշման համապատասխան նախագծում: Դրան պատրաստ ենք այնքան, որքան Հայաստանը»,- ասել է պաշտոնյան:

Գալուզինը չի բացառել, որ ՀԱՊԿ-ի ներսում առկա են «դժվարություններ», որոնք բնորոշ են միջազգային բոլոր կառույցներին, քանի որ նրանք գործնական աշխատանք են կատարում՝ելնելով իրենց բոլոր անդամների շահերից:

«Այսօրվա դրությամբ կազմակերպությունը սկսել է իր երկրների ղեկավարների՝ 2022 թվականին կայացած հանդիպումներում ընդունված որոշումների իրականացման ինտենսիվ գործընթացը: Հիմնականում, Հայաստանի նախագահության շնորհիվ, շատ բան է արվել մեր հավաքական անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները հետ մղելու՝ ՀԱՊԿ-ի կարողությունները զարգացնելու հարցում: Ցանկանում եմ ընդգծել, որ ձեռք բերված արդյունքները հնարավոր չէին լինի առանց բոլոր անդամ պետությունների համակարգված, արդյունավետ եւ շահագրգիռ աշխատանքի»:

«Այժմ ակտիվ նախապատրաստական աշխատանքներ են տարվում մայիս-հունիս ամիսներին նախատեսված արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների խորհուրդների, ՀԱՊԿ անվտանգության խորհուրդների քարտուղարների կոմիտեի հերթական նիստերի համար: Օրակարգը շատ հագեցած է, ինչը վկայում է ՀԱՊԿ-ի պատասխանատվության գոտում անվտանգության եւ կայունության ապահովման հարցերի լուծման գործում կազմակերպության մեծ պահանջարկի մասին»,- ասել է ՌԴ փոխարտգործնախարարը:

